

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2015 թվականի սեպտեմբերի 16-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2015 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի քննաշրջանի ընթացքը:
2. Մասնագիտությունների աշխատանքային ուսումնական պլանների հաստատման հարցը:
3. ՀՈՒՖ անապահով ուսանողների սոցիալական վիճակի և ակադեմիական առաջադիմության ներկայացման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին- 2015 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի քննաշրջանի ընթացքը / զեկուցող՝ Ա.Ե. Համբարձումյան/

Նշվեց, որ քննաշրջանի ժամանակացույցը նախապես համաձայնեցվել է ուսանողների և դասախոսների հետ, կազմվել և փակցվել է հայտարարությունների տախտակում, տեղադրվել է Գավառի պետական համալսարանի պաշտոնական կայքում, քննությունները կազմակերպել են ըստ ժամանակացույցի:

Որոշեցին – Այն ուսանողների համար, ովքեր չեն ներկայացել քննություններին, քննաշրջանից հետո առաջացած ակադեմիական պարտքերը կարող են հանձնել լուծարային շրջանում:

Նշվեց, որ լուծարային շրջանի ժամանակացույցը նախապես կհամաձայնեցվի ուսանողների, դասախոսների, ամբիոնների և դեկանատների հետ և կտեղադրվի Գավառի պետական համալսարանի կայքում, հայտարարությունների տախտակում:

Լսեցին- Աշխատանքային ուսումնական պլանների հաստատման հարցը /զեկուցող՝ Ն. Ա. Կուտուզյան/ Քննարկվեց աշխատանքային ուսումնական պլանները:

Արտահայտվեցին – ամբիոնների վարիչներ Շ. Ա. Մելիքյանը, Ա. Ա. Սիմոնյանը, Հ. Հարությունյանը, Լ. Քուրբջյանը, Հ. Ղուլոյանը:

Որոշեցին – Մասնագիտությունների աշխատանքային ուսումնական պլանները, որոնք քննարկվել են ամբիոններում՝ դասախոսների և արտաքին փորձագետների հետ համատեղ, ներկայացնել հաստատման:

Լսեցին- ՀՈՒՖ անապահով ուսանողների սոցիալական վիճակի և ակադեմիական առաջադիմության ներկայացման հարցը / զեկուցող՝ Ա.Ե. Համբարձումյան/:

Որոշեցին – Ուսման վարձի զեղչի կիրառման համար ԳՊՀ ռեկտորատին ներկայացնել ուսանողների սոցիալական վիճակի և ակադեմիական առաջադիմության արդյունքների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Վ. Դ. Խաչատրյան